**Band: Lav Eli**
**Album: Autumn Raindog**
**Track #8:** Դավաճան **(Traitor)**

**Bm                    D**
Ես երգերի անհոգ հետախույզ էի,
**A                                          G**
    Մեղեդիների խորհրդավոր լրտես,
**Bm                    D**
Եվ բարձրանալու իմ բաժին լույսը,
**A                               G**
     Սրտի եզրի ջրհորից էի գտել:

 **D                                        A**
    Դեգերումներում իմ գաղտնի և ուրախ,
**Em                           Bm**
    Ես մոլորվել էի անծանոթ կողմերում,
**G                              D**
Երբ աղջամուղջից որպես լուսաբաց,
        **A                                          G      A**
Իմ դեմ հառնեցին մեծափառ արքանե-ե-րը:
      **Em          G          D**
Ու ես ապշահար ծնկեցի,
**Em            G          D**
Ես կարկամած մարեցի,
          **Em              G          D**
Իսկ նրանք ինձ անթարթ նայեցին,
            **A**
Ու տեսան ...

                    **D                          A**
Նրանք ինձ պահ տվեցին մի երկիր ոսկեթել,
         **Bm                         G**
Բանալի մի լուսե, մի նամակ երկնային,
               **D                             A**
Նրանք ինձ պատվիրեցին հանկարծ չքնել,
            **Em                            G               A**
Որ երբեք չկրճատվեն այդ երկրի սահմանները:

     Em                  G              D
Ու ես պապանձված ցնծացի,
Em            G                     D
Ես երջանիկ արտասվեցի,
Em               G                     D
Իսկ նրանք ինձ երկար նայեցին,
                 A
Ու հեռացան ...

Interlude: D A  Em  Bm  G D A G A

              Bm                D
Արթնացա երեկ, երեքն անց կեսին,
         A                              Em
Երեսուն տարի հետ նայեցի շփոթված,
          D                           A
Իմ երկիրն անցել էր որպես մի տեսիլք,
    Em                              G             A
Ամեն ինչ անցած էր, անցած գնացած:

              G              D
Դավաճան, անշնորհք դավաճան,
               A                    G
Չպահեցիր ոչինչ, անգամ
                                       D   A
Մի արահետ չպահեցի-ի-իր:
               G             D
Դավաճան, ակամա դավաճան,
           A                        G
Կամակոր կրքերին անկամ
                  D   A
Գերի մնացի-ի-իր:

Bm                    D
Ես երգերի անհոզ հետախույզ էի,
A                                        G
    Մեղեդիների խորհրդավոր լռտես,